



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 29Լ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ  
ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՑԱՆԿԸ, ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված մասնագիտական պատրաստում անցնող անձինք անցնում են պարտադիր փորձաշրջան, և փորձաշրջանի կազմակերպման համար ներկայացվում է համապատասխան դատարանների, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների անունները և պաշտոնները, հիմք ընդունելով 2018 թվականի ուսումնական տարվա ունկնդիրների մասնագիտացումը, և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով` Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումից հետո անցկացվող պարտադիր փորձաշրջանի կազմակերպման համար սահմանել հետևյալ դատարանների ցանկը և փորձաշրջանի ղեկավարների անունները և պաշտոնները.

### Քաղաքացիական մասնագիտացմամբ.

#### ➤ ՀՀ վճռաբեկ դատարան

1. Քաղաքացիական և վարչական պալատի դատավոր **Սուրեն Անտոնյան**  
(համաձայնությամբ):

➤ **Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան**

1. դատավոր **Գայանե Խաչատրյան** (համաձայնությամբ),
2. դատավոր **Երեմ Եսոյան** (համաձայնությամբ),
3. դատավոր **Արսեն Բաբայան** (համաձայնությամբ),
4. դատավոր **Միմիզար Հովսեփյան** (համաձայնությամբ):

**Քրեական մասնագիտացմամբ.**

➤ **ՀՀ վճռաբեկ դատարան**

1. Քրեական պալատի դատավոր **Ելիզավետա Դանիելյան** (համաձայնությամբ):

➤ **Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան**

1. դատավոր **Արսեն Նիկողոսյան** (համաձայնությամբ),
2. դատավոր **Աննա Մաթևոսյան** (համաձայնությամբ):

Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ

2018թ. ապրիլի 6  
ք. Երևան

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**